

ՏԵՂԵԿԱՆՔ

Ռազմական գործողությունների հետևանքով առաջացած համակարգային խնդիրների և առաջարկվող լուծման եղանակների վերաբերյալ

	Խնդիր	լուծում
1.	<p>Անհայտ բացակայող ճանաչելու դատական գործընթացի բարդություններ, արտադատական լուծման կամ խմբային որոշումների կայացման հնարավորության բացակայություն</p>	<p>Գործող օրենսդրությամբ ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողին անհայտ բացակայող ճանաչելու համար շահագրգիռ անձինք պետք է դիմեն դատարան, և դատարանը պետք է անհատական քննության ենթարկի յուրաքանչյուր առանձին դիմում: Ընդ որում՝ գործընթացի համար օրենսդրությամբ սահմանված չեն ժամկետներ, ուստի ներկա պայմաններում գործընթացն անհարկի բարդ է: Որպես լուծում կարող է լինել օրենսդրական ամրագրմամբ որևէ պետական մարմնի վերջին ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողներին անհայտ բացակայող ճանաչելու լիազորությամբ օժտելը, կամ վերջինիս տալ հնարավորություն ուսումնասիրելու, նախապատրաստելու և դատարան խմբակային դիմում ներկայացնելու միջոցով մեկ վարույթի շրջանակներում ավարտել գործընթացը: Հակառակ դեպքում, որպես նվազագույն քայլ անհրաժեշտ է նշված վարույթների համար սահմանել հստակ ժամկետներ: Հարկ է նկատել, որ զինծառայողին անհայտ բացակայող ճանաչելն անհրաժեշտ պայման է նրա ընտանիքի անդամների կողմից Զինծառայողների ապահովագրության հիմնադրամից հատուցում ստանալու և այլ արտոնություններից օգտվելու համար:</p>
2.	<p>Անհայտ բացակայող ճանաչելու դիմումների համար պետական տուրքի առկայություն, անվճար իրավաբանական օգնության իրավունքի ուղղակի ամրագրման բացակայություն</p>	<p>Անհրաժեշտ է օրենսդրական փոփոխություններով ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողին անհայտ բացակայող ճանաչելու համար դատարան ներկայացվող դիմումների համար շահագրգիռ անձանց ազատել պետական տուրքի վճարման պարտականությունից, ինչպես նաև նրանց հնարավորություն տալ ստանալ պետության կողմից երաշխավորված անվճար իրավաբանական օգնություն՝ ելնելով պետության պոզիտիվ</p>

		<p>պարտականությունից: Այդպիսի օրենսդրական նախագծեր ՀՀ փաստաբանների պալատում արդեն իսկ կազմվել են, և առաջիկայում պատրաստվում ենք դնել շրջանառության մեջ:</p>
3.	<p>Զինձառայողների գերեվարման կամ անհայտ կորելու հանգամանքների վերաբերյալ տվյալների ցրվածություն, մի քանի մարմիններում առանձին հավաքվող տվյալներ</p>	<p>Անհրաժեշտ է ստեղծել պետական իրավասու մարմին (օրինակ՝ հանձնաժողով), որի ներքո կստեղծվի կենտրոնացված միասնական շտեմարան: Այդտեղ պետք է մշակվեն ինչպես անհատական, այնպես էլ համակարգային մակարդակներում ստացված տվյալները: Ներկայում գործում է մի քանի հանձնաժողով՝ ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով այս պատերազմի ընթացքում ստեղծված հանձնաժողովը, Գերիների, պատանդների և անհայտ կորած անձանց հարցերով զբաղվող 2018 թվականին ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով, որը գլխավորում է պաշտպանության նախարարը, և վերջերս տեղեկություն տարածվեց փոխվարչապետի գլխավորությամբ տեղի ունեցած միջգերատեսչական հանձնաժողովի նիստի մասին: Դրան զուգահեռ, այդպիսի տվյալները հավաքվում են նաև քննչական և պետական այլ մարմիններում:</p>
4.	<p>Զինձառայողների ապահովագրության հիմնադրամի կողմից հատուցումների տրամադրման գործընթացի դանդաղ ընթացքով պայմանավորված՝ մինչ հատուցում ստանալը զոհված զինձառայողների ընտանիքի անդամներին տրամադրվելիք սոցիալական աջակցության ծրագրերի բացակայություն</p>	<p>Հատուցման գործընթացի դանդաղ ընթացքի պատճառով հատուցում ստանալու իրավունք ունեցող ընտանիքները տևական ժամանակ կարող են զրկված լինել եկամտի աղբյուրներից՝ հաշվի առնելով, որ զոհված զինձառայողները կարող են լինել ընտանիքի միակ կերակրողը: Ոստի առաջարկվում է ինչպես արագացնել հատուցման գործընթացը, այնպես էլ մինչ հատուցում տրամադրելը այս խմբերի անձանց մինչ հատուցում ստանալը տրամադրել սոցիալական աջակցություն:</p>
5.	<p>Մինչ հատուցումն անհայտ կորած զինձառայողների ընտանիքների և լուրջ առողջական խնդիրներ (այդ թվում՝ հաշմանդամություն) ձեռք բերած զինձառայողների համար նախատեսված աջակցության ծրագրերի իրականացման դանդաղ ընթացք</p>	<p>Պետությունը նշված խմբի անձանց համար թեև իրականացնում է աջակցության ծրագրեր, սակայն խնդիրը դրանց դանդաղ ընթացքն է: Նշված ծրագրերի նպատակը կայանում է նրանում, որ հատուցման գործընթացի ձգձգման պատճառով մինչ հատուցում ստանալը շահառու ընտանիքներն ու անձինք դուրս չմնան պետության ուշադրությունից և հոգաձությունից, մինչդեռ աջակցության ծրագրերի դանդաղ ընթացքը չի լուծում նպատակադրված խնդիրը: Անհրաժեշտ է ուսումնասիրել գործընթացի ձգձգումների պատճառները և լուծման ուղղությամբ հրատապ միջոցներ կիրառել՝ անհրաժեշտության դեպքում</p>

		պարզեցնելով բյուրոկրատական գործընթացները, սահմանել ավելի կարճ ժամկետներ, ներգրավվել լրացուցիչ մարդկային ռեսուրսներ և այլն:
6.	Վիրավորում ստացած զինծառայողների հնարավոր հաշմանդամության կարգը որոշելու և սահմանելու գործընթացի տևականություն	Առկա իրավիճակի հաշվառմամբ առաջնային քայլով անհրաժեշտ է պարզեցնել բյուրոկրատական գործընթացը՝ ճգնաժամային իրավիճակին համահունչ, այդ թվում՝ օրենսդրական նախաձեռնությունների միջոցով: Այս առումով հարկ է նկատել, որ թեև պատճառական կապի որոշման համար սահմանված է պարզեցված ընթացակարգ, այդուհանդերձ հաշմանդամության կարգի սահմանումը իրականացվում է ընդհանուր կարգով: Ընդ որում, պատճառական կապի հաստատման պարզեցված գործընթացը կիրառելի է միայն ռազմական դրության պայմաններում, իսկ դրա ավարտից հետո համապատասխան դրույթներն այլևս կիրառելի չեն, ուստի անհրաժեշտ է կարգաբերել նաև այդ կարգավորումները:
7.	Վիրավորում ստացած զինծառայողներին անաշխատունակության ընթացքում կամ դրա առնչությամբ սոցիալական աջակցություն նախատեսված չլինելը կամ չտրամադրվելը	Զորահավաքային կարգով կամ կամավորության հիմքով զորակոչված և ռազմական գործողությունների ավարտով կամ վիրավորում ստանալով պայմանավորված զորացրված որոշ անձինք ստացած վիրավորման պատճառով որոշ ժամանակ կարող են կորցնել աշխատունակությունը, և թեև նրանք հաշմանդամություն ձեռք չեն բերել, այդուհանդերձ ժամանակավոր անաշխատունակության պատճառով գրկվել են գումար վաստակելու հնարավորությունից: Հարկ է նկատել, որ հաշմանդամություն չունեցող անձանց հատուցում չի նախատեսվում, ուստի նույնիսկ փորձաքննություն անցնելուց հետո այդ անձինք որևէ սոցիալական աջակցություն չեն կարող ակնկալել: Միաժամանակ, մինչև հատուցում ստանալն աջակցության ծրագիրը նախատեսվում է պոտենցիալ հաշմանդամության հավակնորդներին, ուստի այս ծրագրերից ևս նշված խումբ անձինք չեն կարող օգտվել: Խնդրի լուծման համար անհրաժեշտ է սոցիալական աջակցության ծրագրեր իրականացնել և տրամադրել հատուցում նշված խումբ անձանց:
8.	Գերեվարված լինելու հանգամանքը հաստատված անձանց (զինծառայողների)	Ուղղակիորեն որևէ սոցիալական աջակցություն սահմանված չէ գերության մեջ գտնվող զինծառայողների կամ պատանդ վերցված քաղաքացիական անձանց ընտանիքի անդամների համար:

	<p>ընտանիքի անդամների համար սոցիալական աջակցության ծրագրերի բացակայությունը</p>	<p>Ընդ որում՝ գերության մեջ գտնվելու պատճառով զինվորական պաշտոնից ազատված և կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողների համար կադրերի տրամադրության տակ թողնելու ժամանակահատվածում թեև պահպանվում է պաշտոնային դրույքաչափը, սակայն խնդիրը կայանում է նրանում, որ նշված զինծառայողների ընտանիքները չեն կարող ստանալ նախատեսված աշխատավարձի գումարը, ուստի այդ պատճառով այն ընտանիքները, որտեղ գերեվարված անձը միակ կերակրողն է, կարող են ունենալ սոցիալական խնդիրներ: Բացի այդ, կամավորական հիմքունքներով մարտական գործողությունների մասնակիցների ընտանիքի անդամները չեն կարող օգտվել նույնիսկ նշված հնարավորությունից:</p> <p>Որպես լուծում առաջարկվում է նշված խումբ անձանց ևս ներառել աջակցության ծրագրերում:</p>
<p>9.</p>	<p>Փաստահավաք համակարգված աշխատանքների բացակայություն</p>	<p>Անհրաժեշտ է նախաձեռնել և կատարել համակարգված աշխատանք պատերազմի հետևանքների փաստերի հավաքագրման ուղղությամբ: Այդպիսի աշխատանքներ պետք է կատարվեն նաև կիրառված արգելված զինատեսակների առնչությամբ: Այն անհրաժեշտ է պատճառված վնասները գնահատելու, արձանագրելու, տարբեր վերպետական մարմիններում իրավունքների պաշտպանություն նախաձեռնելու, նաև հետագայում անձանց իրավունքների պաշտպանության համար:</p>
<p>10.</p>	<p>Ռազմական գործողությունների մեկնելու առնչությամբ առաջացած իրավական խնդիրներ, այդ թվում՝ տարատեսակ պարտավորությունների առնչությամբ, այս խնդիրը առկա է նաև գերեվարված քաղաքացիական անձանց հարցում</p>	<p>Անհրաժեշտ է կատարել համապարփակ ուսումնասիրություն հնարավոր խնդիրների առնչությամբ և օրենսդրական նախաձեռնություններով, այդ թվում՝ ճյուղային և ընդհանուր բնույթի կարգավորումներով, ապահովել անհրաժեշտ և համաչափ երաշխիքներ: Ներկայում մարտական գործողությունների մասնակիցները բազմաթիվ տարաբնույթ հարցերով դիմում են հանրային պաշտպանի գրասենյակ, այդ թվում, օրինակ, վարկային պարտավորությունների առնչությամբ, և խնդիրները հիմնականում լուծվում են համապատասխան կազմակերպությունների հետ բանակցությունների միջոցով:</p>

11.	Տեղահանված անձանց տրամադրվող աջակցության համակարգվածության բացակայություն	Աշխատանքների համակարգվածության բացակայության պատճառով որոշ դեպքերում առաջնահերթությունների հաշվառմամբ նույն շահառուներն օգտվում են պետության և հասարակական կազմակերպությունների կողմից ցուցաբերվող մի շարք աջակցության ծրագրերից, իսկ մյուսները չեն օգտվում որևէ մեկից: Բացի այդ, տվյալների բացակայության պայմաններում կարող են անհարկի խոչընդոտներ ստեղծվել ցուցաբերվող օգնությունը հասցեական տրամադրելու համար: Անհրաժեշտ է համակարգել տեղահանված անձանց տրամադրվող սոցիալական աջակցությունը՝ գործընթացին ներառելով և մասնակից դարձնելով նաև հասարակական կազմակերպություններին և միջազգային կառույցներին: Մասնավորապես, այդ նպատակով կարող է ստեղծվել հանձնախումբ՝ նշված կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավմամբ: Նպատակը տրամադրվող աջակցությունները առավել թիրախային դարձնելն է միասնական տեղեկատվական շտեմարան ստեղծելու և աշխատանքների համակարգվածության միջոցով:
12.	Վիրավորված անձանց համար ներառական ծրագրերի բացակայություն	Անհրաժեշտ է նախաձեռնել հատուկ ծրագրեր, որոնք միտված կլինեն վիրավորում, հաշմանդամություն ստացած անձանց մասնագիտական հմտությունների զարգացմանը՝ նոր պայմաններում աշխատաշուկայում ներգրավվելու երաշխիքներ ապահովելու համար:
13.	Գերեվարված և անհայտ կորած անձանց քանակը չհրապարակելը	Անհրաժեշտ է իրագործել հասարակության իրավաչափ պահանջը և հրապարակել գերեվարված և անհայտ կորած անձանց քանակը: Ընդ որում՝ եթե անհատապես այդ տվյալները խնդրահարույց է հրապարակելը, ապա նվազագույնը անհրաժեշտ է հրապարակել զուտ քանակը:
14.	Միասնական տվյալների շտեմարանների կամ տվյալների փոխանակման հնարավորության բացակայությունը Արցախի և ՀՀ պետական մարմինների միջև	Անհրաժեշտ է ստեղծել միասնական տվյալների շտեմարան: Իսնդիրը կայանում է նրանում, որ օրինակ ՀՀ սոցիալական մարմինները որոշ դեպքերում խնդիրներ են ունենում տեղահանված անձանց սոցիալական աջակցություն տրամադրելու հարցում Արցախում ծնված անձանց ծննդյան փաստի վերաբերյալ տվյալների բացակայության պատճառով: